Մովսեսը կաթողիկոս մնաց չորս տարի ու երեք ամիս: Ապա կաթողիկոս եղավ տեր Փիլիպոս Աղբակեցին, որ Զաքարիային դարձրեց եպիսկոպոս, գավազան տվեց և նրան ուղարկեց Հունաստան նվիրակության: Եվ վերադարձավ Սուրբ Աթոռ Էջմիածին: Կաթողիկոսից պարտադրվելով՝ գնում է Օհանավանք և նստում է իբրև առաջնորդ հազար ութսունվեց (1637) թվին:

Վերստին հաստատեցին, որ ամենի տասանորդը տրվի Օհանավանքին, որպես էր նախապես՝ սահմանված առաջին կաթողիկոսների կողմից: Եկավ տիրեց վանքերը և սկսեց շինություն անել: Հին պարսպի մեջ շինեց պարիսպ եկեղեցու հարավային կողմում, տնտեսատունը, սեղանատունը, խուցերը, հոյակապ աղյուսաշեն պատշգամբներ:

Հավաքեց բազմաթիվ անասուններ՝ ձիեր, ջորիներ, մատակ ձիերի երամակներ, եզներ, գոմեշներ, ոչխարներ, (ձեռք բերեց) հոներ, այգիներ, վեց ստակի մուլք Օհանավանքից, վեց ստակի մուլք Որդկանից, մեկ ստակի ու կեսի Սերկևիլից, մեկ ստակի Փարպիից, մեկ ստակի բրնձաղաց:

Օրհնության թուղթ ուղարկեց Ջուղայի մեծամեծներին, որ արքունական հրաման ստացան պարսից փոքր Շահ Աբասից, զի արքունի հարկերից ազատ լինեն թե այգի, թե հող, թե այլ ամեն բան, ինչ որ վարում, ցանում ենք առանց հնգորդի ու տասանորդի բոլորը հավաքենք շտեմարաններում և վայելենք առանց չարչարանքի:

Նաև հավաքեց շատ գրքեր, ընդունեց բազմաթիվ աշակերտներ, որոնց հետ էի և ես՝ խեղճ Զաքարիաս: Հաստատեց նաև դպրատներ և իմ նվաստությանը նշանակեց մանուկների ուսուցիչ: Բերեց ջուղայեցի Սիմեոն վարդապետին, որ մեզ սովորեցրեց փիլիսոփայական ուսմունքը: Իսկ լվովցի Նիկողայոս վարդապետին բերեց, որ մեզ երաժշտություն սովորեցրեց: Եվ նա ամեն տեսակ այլ բարեկարգություն մուծեց այնտեղ, ամեն ինչ ընդհանուր էր, ոչ ոք առանձին որևէ բան չստացավ: Եվ այսպես ամեն ինչ բարեկարգությամբ հաստատվեց՝ աղոթքներով, պատարագներով: Օհանավանք Սուրբ ուխտը զարդարվեց հոգևորներով ու մարմնավորներով ամենայն պարգևողին ի փառս: Նաև ինքը՝ Զաքարիան, ամեն ինչով հաջողակ էր, քանի որ մարմնավոր իշխանների առջև խոսքը գետին չէր ընկնում, այլ այոն այո էր և ոչը՝ ոչ: Նաև առատաձեռն

էր, որովհետև խոհարարներին պատվիրեց, որ աղքատներին առանց կերակուրի ճամփու չդնեն, այլ ինչ որ եփվի (նաև), տրվի աղքատներին: Եվ այսպես սուրբ տունը ուղղեց ամեն կարգի բարեձևությամբ:

Եվ հազար իննսունհինգ (1646) թվին իր ձեռնասուն աշակերտ Հովհաննես վարդապետ Կարբեցուն ձեռնադրել տվեց եպիսկոպոս և նշանակեց իր տեղը, իսկ ինքը գնաց Պարսկաստան՝ Սպահան քաղաքը, ջուղայեցիների մեջ: Այնտեղ մնաց երկու տարի, նրանցից մեծ գումար դրամ առավ և հազար իննսունյոթ թվին (1648) նորից վերադարձավ և հազար հարյուր (1651) թվին ձեռնարկեց եկեղեցիները նորոգել: Բազմաթիվ քարհատներ բերեց և վեց ամսում ավարտեց չորս եկեղեցիներ: Սրանից հետո կրկին իր տեղը հաստատեց Հովհաննես վարդապետին, իսկ ինքը հրաժարված շրջում էր այստեղ-այնտեղ:

Հազար հարյուր հինգ (1656) թվին գնաց Երուսաղեմ, դարձյալ եկավ: Ապա Սուրբ Էջմիածնի բոլոր միաբանները գնացին, բերին Սուրբ Աթոռ Էջմիածին նրա կարևորության համար: Նրան պահում էին այնտեղ, որպեսզի երթևեկողներին գրավի ու չարագործների բերանը փակի: Եվ նա այնտեղ մնում էր որպես ամենքի հայր ու դաստիարակ:

Իր գերեզմանը փորեց զանգակատան առջև և տեղը սալահատակեց. և երբ ավարտեց սալահատակումը, նույն օրը տկարացավ և մյուս օրը փոխվեց ամենքի հույս Քրիստոսի մոտ՝ հազար հարյուր ութ (1659) թվի հունիս ամսի երեսունին՝ Վարդավառի օրը: Դրվեց իր փորած տապանում: Այստեղ վախճանվեց, բայց կենդանի է Քրիստոսի մոտ, որ օրհնված է հավիտյան, ամեն:

Իսկ Հովհաննես վարդապետը, որ նրա փոխանորդն էր, Կարբի գյուղաքաղաքից էր. սա մի հեզ ու հնազանդ, խոհեմ, կարևոր, ողորմասիրտ, հյուրընկալ, անհիշաչար, ամենքին հաճելի մարդ էր: Նրա բարի վարքի համար ամեն մարդ գալիս էր նրա մոտ և հարցնում, մխիթարվում, հեռանում: Սա իր ամբողջ կյանքով ապրեց պարկեշտությամբ, շինեց Քասաղ գետի վրա Սերկևիլի ձորում գտնվող անապատը, պարիսպը, տնտեսատունը, սեղանատունը, խուցերը, փայտե ժամատունը: Տնկեց շատ այգիներ տեսակ-տեսակ անուշահամ ու քաղցրաբույր մրգերով, բազմացրեց միաբան-